

ISSN 1829-0264

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ա ն ս ա գ ի ր ֆաղափականություն և
աղբարություն

ԵՐԲ-III թողարկման № 2

Օգոստոս 2006

**Մարդկային զարգացումը և
սոցիալական ֆաղափականությունը**

ՏՆՏԵՍԱԿԱՆ զարգացման և հետազոտությունների կենտրոն

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ա մ ս ա գ ի ռ **Բաղափականություն և
աղբահարություն**

Բովանդակություն

Հոդվածներ	2
Մանկական աղբահարությունը Հայաստանում <i>Գոհար Ջրբաշյան</i> <i>Արեգ Ջրբաշյան</i>	2
Մարդկային զարգացման և տնտեսական աճի միջև կապի միջերկրային վերլուծություն <i>Կարինե Հարությունյան</i>	6
Մարդկային աղբահարության համաթիվը և նրա մոդիֆիկացումը Հայաստանում <i>Տաթևիկ Հարությունյան</i>	14
Միկրոադախակազմության ազդեցությունն աղբահարության կրճատման վրա գյուղական երջաններում <i>Գայանե Մովսիսյան</i>	19
Աղբահարություն. Հայաստան-Թուրքիա զուգահեռներ <i>Արման Գաբրիելյան</i>	22
Սոցիալական կառուցվածքի հասկացությունը և դերը զարգացման բաղափականության մեջ <i>Հասմիկ Մինասյան</i>	28
Տնտեսության զարգացման միտումները	32
Տնտեսական միտումները Հայաստանում 2006-ի առաջին կիսամյակի համար	33
Վիճակագրական սլայդներ	35

Մանկական աղփասությունը Հայաստանում*

Գոհար Ջրբաշյան Արեգ Ջրբաշյան

Ինչդեռ «աղփասություն» հասկացությունը չունի սահմանափակ սահմանում, այնուհետ էլ չկան այն չափերը, որ սահմանափակ ձևեր: Հավանաբար աղփասության հարաբերական բնույթն ընդգծող, ամենից ընդունելի սահմանումը հետևյալն է. «Այն ընթացիկներն ու մարդիկ, որոնք, ռեսուրսների անբավարարության տարածառով, չեն կարողանում ձեռք բերել այն սնունդը, մասնակցել գործունեության այն ձևերին և ունենալ կեցության այն տայմաններն ու հարմարությունները, որոնք սովորական են կամ լայնորեն ընդունված այն հասարակությունում, որին տասկանում են, համարվում են աղփաս»¹:

Աղփասությունը բացասաբար է անդրադառնում երեխաների վրա ոչ միայն նյութական գրկանքների ձևով, այլև զգալիորեն սահմանափակում է նրանց որակյալ բուժափասարկում ու կրթություն ստանալու հնարավորությունները, ստեղծում արգելներ հասարակության մեջ նրանց սոցիալական ինտեգրման ճանապարհին, վերացնում կամ վասթարացնում է նրանց այն հնարավորությունները, որոնք ուրիշների համար տարգաղես սովորական ու բնական են: Ընդունելով, որ աղփաս երեխան, որը զրկված է աղազա հեռանկարներից, մարդկային կառիհալի հսկայական կորուստ է ազգի համար, մանկական աղփասության վերացումը լիսի դիսվի որդես ժամանակակից, առաջադեմ ու արժանավայել հասարակության կառուցման անկյունաքար:

«Էժան» մանուկներ և աղփասության հարասություն: Քանի որ աղփաս մանկության հետևանքներն են հյուժվածությունը, առողջության կորուստն ու կրթության բացակայությունը, ուսի աղազայում այդդիսի մարդկանց համար

աղփասության հաղթահարման հավանականությունը ռաս փոքր է:² Հյուժվածությունը կարող է սկսվել դեռ մոր արգանդում և անցկելի հետևանքներ թողնել մարդու առողջության և ճանաչողական զարգացման վրա ողջ կյանքում: Ֆիզիկական միջավայրը, դաստիարակության ոճը, ճանաչողական խթանումները, առողջական վիճակը ծննդյան դահին ու մանուկ հասակում, ինչդեռ նաև մանուկ հասակում սացած բուժափասարկման որակն ու ներգրավումը վաղ մանկական զարգացման (ՎՄՁ) ծրագրերին այն զլխավոր գործոններն են, որոնք կազմավորում են երեխայի մսավոր զարգացումը:³ Բարձր որակի ՎՄՁ ծրագրերում ընդգրկված մանուկներն ավելի մեծ ռանսեր ունեն ավարհին հասցնել միջնակարգ կրթությունը, չննալ նույն դասարանում, փչ կարի ունենալ հասուկ կրթության, ավելի բարձր առաջադիմության ցուցաբերման: Նրանք ավելի որակյալ սնունդ ու բուժափասարկում ստանալու առավել մեծ հնարավորություններ ունեն, ինունիզացիայի բարձր տկոս ու ավելի փչ են ենթարկվում ռահագործման ու անսեսման: Այս երեխաների ավելի մեծ տկոսն է հետագայում բարձր վարձարվող աժխասանք գսնում, որը լիովին բավարարում է կենսական կարիները, և ավելի հազվադեպ է սոցիալական աջակցության կարի ունենում: Նրանց ավելի փոքր մասն է հայսնվում թմրադեղային կախման մեջ ու իրավախախտումներ անում և, ինչդեռ մանկական, այնդես էլ հատում սարիում, ավելի հազվադեպ է հայսնվում բանում:⁴

Աղփաս դառնալու ռիսկը մեծաղես կախված է ճնային ճնեսության կառուցվածից ու խնամի սակ գսնվողների թվից: Հայաստանում աղփասության մեջ հայսնվելու ամենամեծ ռիսկն ունեն այն ճնային ճնեսությունները, որսեղ կան 7 սարեկանից փոքր երեխաներ, կան 3 և ավելի երեխաներ: Երեխաները Հայաստանի բնակչության ամենից խոցելի մասն են: 2003 թվականին նախադորոցական սարիի երեխաների

* Հողվածը հիմնված է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ - Հայաստանի (Եվրասիա հիմնադրամ) 2005 թվականի (Ելու Յորի Քարնեզի Կորդոացիայի ֆինանսական աջակցությամբ) դրամաճորհային ծրագրի ռզանակներում հեղինակների իրականացած հետազոտության վրա:

¹ P. Townsend, *Poverty in the United Kingdom*, Penguin, 1979, p. 31

² Omer Moav, *Cheap Children and Persistence of Poverty*, p. 1

<http://micro5.mssc.huji.ac.il/~melchior/cheap.pdf#search=Omer%20Moav,%20Cheap%20Children%20and%20Persistence%20of%20Poverty>

³ Guo Guang and Kathleen Mullan Harris, *The Mechanisms Mediating the Effects of Poverty on Children's Intellectual Development*, *Demography*, V. 37, No.4, 2000, pp. 431-447, p. 437 <http://muse.jhu.edu/demo/demography/v037/37.4guo.pdf>

⁴ Robert G. Lynch, *Exceptional Returns: Economic, Fiscal, and Social Benefits of Investment in Early Childhood Development*, *Economic Policy Institute*, p. 4

[http://www.epinet.org/books/exceptional/exceptional_returns_\(full\).pdf](http://www.epinet.org/books/exceptional/exceptional_returns_(full).pdf)

42.8 տոկոսն աղֆաս էին, իսկ 11.5 տոկոսը՝ ծայրահեղ աղֆաս (2002-ին համադասասխա- նաբար 40.5 և 17.1 տոկոս), լինելով ամենից բարձր բոլոր սարիֆային խմբերում: Աղֆասու- քյան երկրորդ ամենից բարձր մակարդակը դիտվում է 7-16 տարեկանների սարիֆային խմբում. 2003-ին աղֆաս էին 39.0 տոկոսը և ծայրահեղ աղֆաս՝ 8.7 տոկոսը (2002-ին՝ 39.9 և 15.3):⁵ Չնայած աղֆասության կրճատման առու- մով 2004-ին գրանցված նեանակալի առաջըն- քացին, 5 տարեկանից փոքր երեխաների 41.9 տոկոսը շարունակում էր մնալ աղֆաս և 8.0 տոկոսը՝ ծայրահեղ աղֆաս:⁶ Հիմնական դաս- ճառը, որ այդքան շատ երեխաներ աղֆաս են, այն է, որ աղֆաս ընթանիներում ծնվում են ավելի շատ երեխաներ: Աղֆաս ընթանիներն ի վիճակի չեն բավարար միջոցներ սրամադրել երեխաների ուսմանն ու բուժադասարկմանը, և այդ դասճառով այդ ընթանիներն երեխաները մեծադեպ ենթակա են շարունակաբար աղֆաս մնալու ռիսկին, քանի որ նրանց ապրուստի միջոցներ վասակելու հնարավորություններն էադեն սահմանափակված են իրենց կուսակած ցածր մարդկային կադիսալով:

4 կամ ավելի ֆիչ երեխաներ ունեցող սնային սնեստությունները սովորաբար իրենց համարում են միջին կամ միջինից բարձր սոցիալական խմբերում, այնինչ այն սնային սնեստություն- ները, ուր կան 4-ից ավելի երեխաներ, սովորա- բար իրենց համարում են միջինից ցածր սոցիա- լական խմբում: Երեխաների թվի աճին զուգա- հեռ, աղֆաս լինելու և ավելի ցածր սոցիալական խմբին դասկանելու զգացումն ուժգնանում է (սենս ադյուսակ 1):⁷

Մարդկային աղֆասություն, առողջություն և կրթություն: Վաս առողջությունը կարող է լի- նել աղֆասության ինչդեպ դասճառ, այնդեպ էլ հեսևանֆ: Աղֆասները հայսնվում են անելանելի Երջադոսյոսում՝ վասառողջների աղֆասանալու, ինչդեպ նաս աղֆասների առողջությունը կորց- նելու (վասառողջ դառնալու) ու հասնանդան դառնալու հավանականությունը շաս մեծ է: Տնային սնեստության անդամների առողջական վիճակն ու կրթական մակարդակն էական դեր ունեն իրենց այս կամ այն սոցիալական խմբին դասկանելու ընկալման հարցում: Երկու հա- մանման սնային սնեստություններից իրեն ավելի հաճախ աղֆաս է համարում այն, որում կան հիվանդներ: Ավելի ֆիչ է դասահում, որ իրենց աղֆաս համարեն այն սնային սնեստություն- ները, որոնց գլխավորն ու ամուսինը լալ կրթու- թյուն ունեն՝ որքան բարձր է կրթական մակար- դակը, այնքան մեծանում է իրենց աղֆաս չհա- մարելու ընկալումը: Այսդեպ, սնային սնեստու- թյունների մեջ, որոնց գլխավորներն ունեն բարձրագույն կրթություն, միջինից 12.9 տոկոսով ավելի ֆիչ են իրենց աղֆաս համարող սնային սնեստությունները:⁸

Հայասանում բուժադասարկման անմասչելիու- թյան դասճառով 2003 թվականին հիվանդների 42.8 տոկոսը թժժի չեն դիմել: Առողջադասա- կան ծառայությունները ֆինանսադեպ անմաս- չելի են Հայասանի բնակչության մեծամասնու- թյան՝ 87.5-98.4 տոկոսի համար: Բուժհիմնարկի հեռավորությունը միայն 1.2 տոկոսի համար է անմասչելիության որոժիչ դեր ունեցել: Ամենա- սուր դակասությունը սնային սնեստությունները զգում են առողջադասական կարիֆների բավա-

Ադյուսակ 1. Տնային սնեստությունների սնեսական վիճակի ու սոցիալական խավի ինֆնագնահասականները Հայասանում

Ընթանիներ, որոնֆ	Երևան				Կոսալֆ 2005	
	2004		2005		սնեսական վիճակ*	սոցիալական խավ**
	սնեսական վիճակ*	սոցիալական խավ**	սնեսական վիճակ*	սոցիալական խավ**		
չունեն երեխա	3.60	2.99	3.58	2.48	3.74	3.00
ունեն մինչև 4 երեխա	3.77	3.34	4.11	3.70	3.68	2.96
ունեն 4 և ավելի երեխա	4.00	2.14	3.75	2.25	4.10	2.06

Նշում. *1 - շաս լալ, 5 - շաս վաս, ** 1 - առավել ցածր լալ, 5 - առավել բարձր լալ Ադյուսդը՝ Սեֆական հասվարկներ, ՀՈԿԿ 2004-2005 նախաժեռնության սվյալներ

⁵ Հայասանի սոցիալական դասկերը և աղֆասությունը, ՀՀ ԱԿԾ, 2003, էջ 120

⁶ Հայասանի սոցիալական դասկերը և աղֆասությունը, ՀՀ ԱԿԾ, 2006, էջ 47

⁷ G.Jerbashian, A.Jerbashian, "Child Poverty in Armenia", p. 21 http://www.crc.am/store/files/db_fellows/gj/Child%20Poverty_Final%20Paper.pdf

⁸ Հայասանի սոցիալական դասկերը և աղֆասությունը, ՀՀ ԱԿԾ, 2006, էջ 163

Ընդգրկման ցուցանիշը հասկալից նվազում է աղփասների Երջանում, ավելի մեծ արագությամբ՝ 16 տարեկանների Երջանում: Չնայած դրան, հասարակության ամենից աղփաս Եերսի՝ 17-20 տարեկանների, մոտ 20-30 տոկոսը Եարունակում է ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում և այստիսով ձգտում է ձեռք բերել մասնագիտություն, որը հնարավորություն կտա նրանց հաղթահարել աղփատությունը:¹⁶

Դեռահասների հանցավորությունը: Հանցավորությունը վնասում է ոչ միայն առանձին անհասների, այլև արգելակում է երկրի սոցիալական, սնտեսական ու իրավական զարգացումը, վսանգի սակ է դնում հասարակության կարևոր արժեքները: Դեռահասների հանցավորության մակարդակը Եատ մեծ է Հայաստանում բանտարկված մեղադրյալների մեջ 14-17 տարեկանները կազմել են ընդամենը 5.4-5.7 տոկոս 2003-2005 թվականներին:¹⁷ 2003-2004 թվականներին 14-17 տարեկան դեռահասների մոտ 0.8 տոկոսն է հանցանք գործել: Դեռահասների հանցագործությունների մեծ մասը վերաբերում է փոքր, ոչ լուրջ օրինազանցությունների: Հաճախ, ըստ էության, միակ «հանցանքը» լինում է նրանց աղփատությունը, անօթևանությունն ու անհույս վիճակը: Դեռահասները հիմնականում գործում են թեթև, «ավանդական» հանցանքներ՝ զողություն, թալան, ավազակություն, խուլիգանություն, մարմնական թեթև վնասվածքներ: Դեռահասների հանցագործությունների մեծ մասը (67.3 տոկոսը, 2003 թվական¹⁸) բաժին է ընկնում այն դեռահասներին, որոնք չեն աԵխատում կամ սովորում, կամ էլ ծայրահեղ/մարգինալ սոցիալական վիճակում են ու աղփատ:

Դեռահասների հանցավորությունն ունի իր հատուկ տատանները: Հատունության «անցման Երջանը» երկարում է՝ Եվրոտայում 1987 թվականին 18 տարեկանների 50 տոկոսն աԵխատանք ուներ, իսկ արդեն 1995 թվականին 50 տոկոս զբաղվածության հատել են 20 տարեկանում:¹⁹ Սոցիալական հատունության ժամկետի երկարածությունը մեծացնում է Երեական աԵխարհի հետ

կաղվելու վսանգը: Հայատանում 50 տոկոս զբաղվածության ցուցանիշը հատանելի է միայն 30-34 տարիային խմբի համար (տղամարդկանց համար՝ 25-29 տարեկաններ):²⁰ Դեռահասների հանցավորության աճի այլ տատաններ են կանանց զբաղվածության ընդլայնումն ու մատչելի սոցիալական ծառայությունների բացակայությունը: Կանայք, որոնց չգրված «սոցիալական դերը» երեխաներին խնամելն ու դատտիրակելն է, զբաղվածության աճի, երեխաների խնամքի ու մանկատատատանական հատատությունների նվազման իրողության տայմաններում հաճախ առանց հսկողության ու խնամքի են թողնում դեռահասներին: Մյուս կողմից, ժամանակակից երեխաներն անհամեմատ ավելի մեծ տեղեկություններ են ստանում հատուն մարդկանց աԵխարհի «տոտուղների» մատին: Մատնավորատես, նրանք կամայական տեղեկություններ կարող են ստանալ հեռուստատտությանը ու ինտերնետով, որտեղ որքան ատես կարելի է գտնել բռնություններով ու հանցագործություններով հագեցած, ինչոքես նաև էրոտիկ ֆիլմեր ու տատանություններ: Մրանք երեխայի մեջ ճնշում են բարոյական նախատակիզքն ու ստեղծում համոզմունք, որ աԵխարհում հաղթում է միայն ֆիզիկատես ամենատուժեղը, ամենատարդախը և այլն: Այս տատակերացումներն ամրատղնվում են հատարակությանը հայտնի աղմկալի հանցագործությունների, ներառյալ կոռուտոցիոն դրսևորումների անտատտելիության տայմաններում: Կրկնակի ստանդատտները, հատկատես կրթական ոլորտում, որին ուղղակիորեն առնչվում են տատանիները, տղծում են դեռահասների հոգիներն ու աղավաղում նրանցից Եատերի վարտագիծը:

Դեռահասների աԵխատանքը: 2004 թվականին 15-19 տարեկանների մոտ մեկ Եառորդը տնտեսատես ակտիվ է եղել²¹, իսկ նրանց 7.5 տոկոսն աԵխատել է:²² ԱԵխատտող դեռահասների 33.8 տոկոսը Եարթաթական ծախսել են ավելի Եան 25 ժամ (22.1 տոկոսը՝ 35 ժամ) իրենց աԵխատավայրում, ինչը կնԵանակի, որ նրանք ավելի

¹⁶ Հայատանի սոցիալական տատակերը և աղփատությունը, ՀՀ ԱԿԾ, 2006, էջեր 98, 120
¹⁷ Սոցիալական վիճակը Հայատանում 2003, էջ 156, 2004, էջ 258, 2005, էջ 158
¹⁸ Վիճակագրական տարեգիր, 2005, էջ 183
¹⁹ Lithuanian Human Development Report, 1999, pp. 147-148, http://www.un.lt/images/socialine_raida/en/1999/10CHAPTER.pdf
²⁰ ԱԵխատանի Եուկան Հայատանի Հանրատեսությունում, 2004, էջ 18
²¹ ԱԵխատանի Եուկան Հայատանի Հանրատեսությունում, 2004, էջ 17
²² G.Jerbashian, A.Jerbashian, "Child Poverty in Armenia", p. 55

Ըստ ժամանակ են ծախսել առօրյա աշխատանքներ, քան դրոշմը: Առօրյա դեռահասների մոտ 8.0 տոկոսը շաբաթվա մեջ աշխատել է ավելի քան 56 ժամ, ինչը չափից դուրս է նույնիսկ հասուն մարդկանց համար:²³ Այդ դեռահասներին աշխատել ստիպող հիմնական գործոնը (63.6 տոկոս) իրենց ընտանիքների ծանր ֆինանսական դժվարություններն են:

Ամփոփում: Մանկական աղքատության վերացման կարևորությունն ակնհայտ է, ինչը հիմնավորված է այն բացասական ազդեցությամբ, որն աղքատությունը կարող է ունենալ մանուկների աղաքայի վրա: Մանկական աղքատության վերացման ծրագրերը դեռևս է աղաքային բարձրորակ առողջապահական ծառայությունների, զարգացման ու կրթական ծրագրերի մասշտաբային թուրքեր են: Դեռահասներին ու երիտասարդներին արդյունավետ գործունեությամբ զբաղեցնելը դեռահասների հակասոցիալական վարք կանխելու ամենից արդյունավետ ճանապարհներից մեկն է: Ընդհանրապես, նույնիսկ նախադրյալներից հիմնարկների վերականգնմանն ու օգնելով աղքատ ընտանիքների երեխաներին ներգրավվել վաղ մանկական զարգացման ծրագրերում ու մանկապատանեկան սեղծագործական, սպորտային կենտրոններում, միջոցներ ձեռնարկելով մեծացնելու «դժվար» երեխաների ընդգրկումը դրոշմներում (հասկալի միջին մասնագիտական կրթական հաստատություններում), հնարավոր է այդպիսի երեխաներին հասունության հետ ընձեռել մրցունակություն առօրյա աշխատանքի օրվա լույսում և նույնիսկ աղքատության անօրջելի վերացմանը Հայաստանում:

Գոհար Ջրբաբյանը մաթեմատիկայի մագիստրոսի ու գործարար ղեկավարման մագիստրոսի կոչումներ ունի, որոնք նա ստացել է, համադասախանաբար, ԵՊՀ-ից և ՀԱՀ-ից: 1978 թվականից դասավանդում է ԵՊՀ-ում: 1998 թվականից սկսած Գոհար Ջրբաբյանն աշխատում է սոցիալական ոլորտի զարգացման տարբեր ծրագրերում: Վերջին ժամանակների հետազոտական աշխատանքները հիմնականում վերաբերում են աղքատության, ժողովրդագրական ուսումնասիրություններին, կենսաթուրքային աղաքայինության, առողջապահական ու սոցիալական աջակցության համակարգերի վերլուծությանն ու բարեփոխումներին: Այժմ նա աշխատում է ՆՕՎԱ ծրագրում (ԱՄՆ ՄՁԳ) որդես առողջապահական համակարգերի վերլուծաբան:

Արեգ Ջրբաբյանը սնտեսագիտության մագիստրոսի կոչում է ստացել ԵՊՀ-ից: Որդես ավարտական կուրսի ուսանող նա փորձառությունն անցել է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնում: Ներկայում նա ծառայում է Հայաստանի զինված ուժերում:

Մարդկային զարգացման և սնտեսական աճի միջև կապի միջերկրային վերլուծություն

Կարինե Հարությունյան

Ինչդեռ Հայաստանում, այնպես էլ ամբողջ առօրյաում, մարդկային զարգացման և սնտեսական աճի միջև կապի ուսումնասիրություններն այսօր մեծ կարևորություն են ստանում: Նույնիսկ զարգացած շատ երկրներում սնտեսական աճի բարձր ցուցանիշները չեն բարձրացնում ինտենսիվորեն ազդել բարեկեցության բարելավման վրա: Մյուս կողմից, եկամուտների ցածր մակարդակ ունեցող որոշ երկրներում մարդկային զարգացման մակարդակը համեմատաբար բարձր է՝ չհամադասախանելով եկամուտների մակարդակին: Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, ուր մարդկային զարգացումը (հաշվարկված Մարդկային զարգացման համաթվով) համեմատաբար բարձր է եկամուտների մակարդակից (հաշվարկված մեկ օճի ընկնող ՀՆԱ-ով): Այս օճիումները կարճաժամկետ են և ենթակա երկարաժամկետում հաշվեկռում: Հայաստանում վերջին տարիներին արդեն իսկ նկատվում է մարդկային զարգացման մակարդակի անկում:

Հողվածը վերաբերում է մարդկային զարգացման և սնտեսական աճի միջև կապի ուսումնասիրությանը, որն առավել ընդգրկում աշխատությունից ամփոփումներ են: Առաջին մասում ներկայացվում է առօրյաի տարբեր երկրներում սնտեսական աճ և մարդկային զարգացում կապի դրսևորումները: Հողվածի երկրորդ մասում փորձ է արվում, ըստ յուրաքանչյուր երկրում սնտեսական աճ - մարդկային զարգացում կապի ամրության, իրականացնել երկրների դասակարգում, և ըստ այդմ որոշել Հայաստանի տեղը և հնարավոր զարգացման հեռանկարները:


²³ Առօրյաումը և մանկական զբաղվածությունը Հայաստանում, ԳՅ ԱՎԾ, 2004, էջեր 17, 18, 72

Տնտեսական աճի և Մարդկային զարգացման կառուցվածքի դրսևորումները

Մարդկային զարգացումը ենթադրում է մարդկային ունակությունների ձևավորման և օգտագործման ընդլայնում: Դրանք վերաբերում են ինչդեպ առողջության բարելավմանը, կրթության և հմտությունների ձեռքբերմանը, այնդեպ էլ ձեռքբերված ունակությունների օգտագործման հնարավորություններին՝ հանգստի, արտադրական, մշակութային, ֆադաֆական և սոցիալական կյանքում մարդու մասնակցության աղաժողովման համար:

Տնտեսական աճը մարդկային զարգացման կարևորագույն նախադրյալ է: Միաժամանակ, մարդկային զարգացման ոլորտում ձեռքբերումներն էլ իրենց հերթին կարող են նդդասել տնտեսական աճին: Այսինքն՝ տնտեսական աճի և մարդկային զարգացման ցուցանիշների միջև առկա են երկու տարբեր դասձառնահետևանքային շղթաներ: Այս դասձառնահետևանքային կադդերի առկայությունը կարձես թե հիմք է տալիս ենթադրելու, որ տնտեսությունը դդեսֆ է գձնվի դեղդի վեր միտված դարույրի վրա: Այսինքն՝ մարդկային զարգացման (այտուհետ՝ նաև ՄՁ) բարձր մակարդակը դդեսֆ է հանգեցնի տնտեսական աճի (այտուհետ՝ նաև ՏԱ) բարձր մակարդակի, իսկ սա էլ իր հերթին դդեսֆ է նդդասի ՄՁ-ի ավելի բարձր մակարդակի ձեռքբերմանը և այտդես շարունակ: Անշուտ, կարող է տեղի ունենալ նաև հակառակը:

Գձադդասկեր 1.Ա Մարդկային զարգացման բարելավում, եկամուտների փոքր աճ




ՄԱԿ-ի անդամ 177 երկրների մարդկային զարգացման և տնտեսական աճի 1975-2002 թվականների ցուցանիշների մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրականում ՄՁ և ՏԱ միտումները կարող են չհամընկնել: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ **տնտեսական աճի և մարդկային զարգացման ցուցանիշների միջև մեխանիկական կադդը բացակայում է:**

Համաձայն մեր դիտարկումների, հնարավոր է առանձնացնել ՄՁ և ՏԱ ցուցանիշների միտման 4 տարբեր դրսևորումներ:


- **Մարդկային զարգացման բարելավումը զուգորդվում է եկամուտների փոքր աճով:** Նման միտում դիտարկվել է մարդկային զարգացման ցածր մակարդակ ունեցող ինչդեպ ադդաս (օրինակ՝ Գանա, Պակիստան, Նիգերիա), այնդեպ էլ եկամուտների բավականին բարձր մակարդակ ունեցող (օրինակ՝ Իրան, Ալժիր, Օման) երկրներում (տես գձադդասկեր 1.Ա և 1.Բ):
- **Մարդկային զարգացման բարելավումը զուգորդվում է եկամուտների մեծ աճով:** Նման միտում դիտարկվել է մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող, սակայն ադդաս այնդդիսի երկրներում, ինչդդիսի են Չինաստանը, Շրի Լանկան, Ինդոնեզիան (գձադդասկեր 2): Սա բնորոշ է նաև մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող հարուստ երկրներին:

Գձադդասկեր 1.Բ Մարդկային զարգացման բարելավում, եկամուտների փոքր աճ




Հողվածներ

Չճադասկեր 2. Մարդկային զարգացման բարելավում, եկամուտների մեծ աճ



Չճադասկեր 3. Մարդկային զարգացման անկում, եկամուտների մեծ աճ




- Մարդկային զարգացման անկում եկամուտների մեծ աճի դեպքում:** Նման միտումը բնորոշ է հասկապես Բոթսվանայի օրինակին, որտեղ, դայանավորված ՄԻԱՎ/ՉԻԱԳ-ի սարածմամբ, խիստ կրճատվել է կյանքի սպասվող տևողությունը, և չնայած կրթության ինդեքսի դրական զարգացումներին, մարդկային զարգացման ինդեքսն անկում ապրեց (զճադասկեր 3):
- Մարդկային զարգացման անկումը զուգորդվում է եկամուտների անկմամբ:** Նման միտումը հասկապես բնորոշ է նախկին խորհրդային երկրներին, այդ թվում՝ Հայաստանին, ուր, դայանավորված անցումային խնդիրներով, սեղի ունեցավ թե՛ եկամուտների և թե՛ մարդկային զարգացման անկում:

Այսպիսով, ՏՄ և ՄՁ դրսևորումները տարբեր են, և դրանք կարող են բացատրել ՏՄ և ՄՁ կառուցման մեթոդները: ՏՄ և ՄՁ կառուցումը կարող է լինել ուժեղ կամ թույլ, ըստ այնպիսի այն կարող է հանգեցնել ՏՄ և ՄՁ մակարդակների տարբեր կոմբինացիաների: Համաձայն սնտեսական զարգացման միջավայրի վրա իրենց ազդեցության, ՏՄ և ՄՁ կառուցումը կոմբինացիաները կարելի է անվանակարգել՝ Արդյունավետ, Նահանջող կամ Միակողմ զարգացումներ¹ (տես սխեմա 1):

Այսպիսով, կառուցումը դայանավորում է ՏՄ-ՄՁ ցիկլը: ՏՄ-ՄՁ ուժեղ կառուցումը հնարավոր են Արդյունավետ կամ Նահանջող զարգացումներ: Արդյունավետ զարգացում են ապրում այն երկրները, որտեղ ՄՁ ցուցանիշների դրական միտումները հանգեցնում են ՏՄ-ի

Սխեմա 1. Զարգացումներն ըստ ՏՄ և ՄՁ կառուցման



¹ Նման դասակարգումը տրված է ՄԱԿ-ի կողմից: Սեղի գտնում են, որ դասակարգման հիմքում կարելի է դնել ՄՁ և ՏՄ կառուցման բնույթը:

Հողվածներ

բարձր մակարդակի, սա էլ իր հերթին նույնպես է ՄՁ-ի բարելավմանը: Նահանջող զարգացման դեմքում հակառակ իրավիճակն է՝ ՄՁ-ի բացասական միտումները հանգեցնում են ՏԱ-ի վաճառանքների, որն էլ իր հերթին բացասաբար է ներգործում ՄՁ ցուցանիշների վրա:

Երբ ՏԱ-ՄՁ կադերը համեմատաբար թույլ են, առաջ են գալիս Միակողմանի զարգացումները, այսինքն՝ կան ՏԱ-ին, կան ՄՁ-ին միջված զարգացումները:

Տնտեսական աճի և մարդկային զարգացման կադի բնույթը Հայաստանում


Տնտեսական ֆաղափարանության շեղանկյունից շատ կարևոր է որոշել, թե կոնկրետ երկրում ՏԱ-ՄՁ կադի ինչ դրսևորումներ են գործում, ինչդեպ կարող են ֆաղափարանությունները ներգործել կադի ամրության վրա և ինչ ուղիներով հասնել «արդյունավետ զարգացման»: Հայաստանում բացարձակ նշանակությամբ առկա է մարդկային զարգացման միջին մակարդակ, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը բավականաչափ փոքր է, ուստի 1999-2003 թվականների համար 131 երկրների² համեմատական վերլուծու-

թյունը դարձեց, որ Հայաստանում առկա է ՏԱ-ին ուղղված զարգացում:

Այս վերլուծության համար որդես երկրներում մարդկային զարգացման բարելավման ցուցանիշ դիտարկել ենք ՄՁԻ*-ի³ դեֆիցիտի կրճատումը, իսկ որդես ճնշական աճի ցուցանիշ վերցրել ենք մեկ շնչի հաշվով գնողունակության դարձեցում ճշգրտված ՀՆԱ-ի աճը: Նշված ցուցանիշների սկստերոգրամայի⁴ (գծադասկեր 4) առաջին ֆառորդում են զսնվում «արդյունավետ զարգացող երկրները», երկրորդ ֆառորդում են «ՄՁ-ին միջված զարգացում ունեցող երկրները», երրորդում են «նահանջող զարգացում ունեցող երկրները» և, վերջադես, չորրորդ ֆառորդում զսնվում են «ՏԱ-ին միջված զարգացում ունեցող երկրները»:

Առկա են երկրների բաշխման որոշակի օրինաչափություններ, հասկադես խիստ է սարածաշառային գործոնի ազդեցությունը: Այսդես, օրինակ, բարձր մարդկային զարգացում ունեցող ՆԽՄ երկրները, որոնք են Մեծբալթյան երկրները, ինչդես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոդայի նախկին խորհրդային երկրները, մեծամասամբ զսնվում են առաջին ֆառորդում: Եվրոդական երկրները լիովին բացակայում են

Գծադասկեր 4. Երկրների բաշխումն ըստ զարգացման ուղղվածության 1999-2003 թվականների համար



² ՄԱԿ-ի անդամ այն երկրները, որոնք դեռևս 1999 թվականին հանդիսացել են ՄԱԿ-ի անդամ, բացառությամբ բարձր ՄՁ ունեցող ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն՝ OECD) երկրների:

³ Մարդկային զարգացման զնահաման ամենասարածված ցուցանիշը մարդկային զարգացման ինդեքսն է (ՄՁԻ), որը իրենից ներկայացնում է կյանքի սղաակող ստորոդես, կրթամակարդակի և կենսամակարդակի ինդեքսների միջին թվաբանական մեծությունը: ՄՁԻ*-ն հանդիսանում է ՄՁԻ-ի ոչ նկամաչային բաղադրիչը, այսինքն՝ իրենից ներկայացնում է կյանքի սղաակող ստորոդես և կրթամակարդակի միջին թվաբանական մեծությունը:

⁴ Կորդինատային առանցքների հասման կեճ վերցվել է (5;6) կորդինատներով կեճը, այն դարձ դասճառով, որ 5 և 6 թվերը համադասախառնաբար հանդիսանում են դիտարկվող երկրների մեկ շնչի ընկնող ՀՆԱ-ի աճի և ՄՁԻ*-ի դեֆիցիտի կրճատման թվաբանական միջինները:

Հողվածներ

Նախանշող երկրների խմբից, այսինքն՝ երրորդ ֆառորդից: ՆԽՄ երկրների մեծամասնությունը զտնվում են չորրորդ ֆառորդում, դրանք են Հայասանը, Ռուսասանը, Ուկրաինան, Ղազախասանը, Վրասասանը, Ադրբեջանը, Տաջիկասանը և Թուրմենսասանը, այսինքն՝ այս երկրներում նկատելի է մարդկային զարգացման միտումների կրճատում՝ ի հակադրություն տնտեսական աճի տեմդերի:

Հարավային և Արևելյան Ասիայի երկրները հավասարաչափ բաժնված են առաջին և երկրորդ ֆառորդներում, մյուս ֆառորդներում սրանց թիվը փոքր է: Արաբական երկրները մեծամասամբ զտնվում են երկրորդ ֆառորդում և լիովին բացակայում են «արդյունավետ» խմբում: Երկրորդ ֆառորդում են զտնվում նաև Լատինական Ամերիկայի երկրների մեծամասնությունը: Աֆրիկյան երկրները բաժնված են բոլոր ֆառորդներում, սակայն սրանց բացարձակ մեծամասնությունը զտնվում է չորրորդ ֆառորդում:

Այստիսով, Հայասանը զտնվում ՏԱ-ին միտված զարգացում ունեցող երկրների խմբում, և դարձվում է, որ արդյունավետ զարգացում տանող ուղին Հայասանի համար, և ընդհանրադես այդ խմբին դասկանող երկրների համար, մարդկային զարգացման բարելավումն է: Ընդ որում, այդ նդասակի ձեռքբերումն անհմար կլինի առանց տնտեսական աճի տեմդերի կորդսի: Այդ են վկայում 1960-1992 թվականների


ընթացում 67 զարգացող երկրների ռարժը նեված տիրոյթների միջև: Այդ ռարժը ներկայացված է գծադասկեր 5-ում, որտեղ ուղղորդված կորերը ցույց են տալիս երկրների հնարավոր ռարժերի ուղղությունները:

Այս ռարժերից հետևում է, որ այս կամ այն ուղղությամբ հակվածությունը գրեթե բոլոր դեմդերում ժամանակավոր երևույթ է (տն՝ Հավելված): Հիմնական եզրակացությունն այն է, որ ՄՁ-ին հակված զարգացում ունեցողներն ավելի ռաս միտված են դեմդի «արդյունավետ» տիրոյթ, իսկ ՏԱ-ին հակվածներն ավելի ռաս հայտնվում են «նախանշող» խմբում: Շաս ֆիչ երկրների մոտ է հանդիդում «նախանշողից» անցում դեմդի «արդյունավետ» զարգացում: Նրանք հիմնականում ռարժվում են «նախանշողից» դեմդի «ՄՁ-ին միտված զարգացում», այնուհետև նոր միայն՝ «արդյունավետ»:

Ամփոփում


Այստիսով, Հայասանը զտնվում է «ՏՁ-ին միտված» զարգացման տիրոյթում և դեմդի «արդյունավետ» զարգացման տիրոյթ կարող է հասնել 4 ուղիներով, որոնք դասկերված են գծադասկեր 6-ում: 1960-1992 թվականների ընթացում երկրների զարգացման վերլուծությունը ցույց է տվել, որ ռաս հազվադեմդ են անցումը «նախանշողից» դեմդի «արդյունավետ» տիրոյթ, իսկ «ՏԱ-ին

Գծադասկեր 5. Երկրների ռարժը զարգացման տիրոյթների միջև՝ 1960-1992 թվականների ընթացում



Հողվածներ

Գծադասկեր 6. Չարգացման սիրույթների միջև Հայաստանի հնարավոր շարժի ուղիները



միջվածից»՝ դեմոֆի «արդյունավետ», չի գրանցվել: Այնուամենայնիվ, նման անցման հնարավորությունը չի մերժվում կամ բացառվում:

Ուստի Հայաստանում մարդկային զարգացման ներկա մեռուժի դաժանումը նույնիսկ բավարար չէ և, ի հակադրություն վերջին տարիների միտումների, ՄՁ-ն դեմոֆ է աճի:

Մարդկային զարգացման նպատակադրումը կամ ճնշման աճի դեմոֆները դեմոֆի ՄՁ

ուղղորդումը փառաբանության արդի դաժան ղեկ է լինի: Այսինքն՝ ճնշման փառաբանության նպատակը դեմոֆ է ոչ թե ճնշման աճի մակարդակը լինի, այլ մարդկային զարգացման, կամ այլ կերպ ասած՝ դեմոֆ է կարևորվի ճնշման աճի որակը, ոչ թե քանակը:

Կարևոր հարությունները ՀՀՏՏ Մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնի աշխատանք է:

Հողվածներ

Հավելված. Արդյունավետ, Նահանջող և Միակողմանի զարգացումները 1960-1992 թվականների ընթացքում

Աֆրիկա	1960-1970	1970-1980	1980-1992
Բենին	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Բոթսվանա	Նահանջող	Արդյունավետ	Արդյունավետ
Բուրկինա Ֆասո	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Բուրունդի	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Կամերուն	Նահանջող	ՏԱ-ին միջված	Նահանջող
Կենտր.Աֆրիկյան Հնր.	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Չադ	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Կոնգո	Նահանջող	ՏԱ-ին միջված	Նահանջող
Կոս դը Իվուար	ՏԱ-ին միջված	Նահանջող	Նահանջող
Գաբոն	ՏԱ-ին միջված	Նահանջող	Նահանջող
Գանա	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Քենիա	Նահանջող	Արդյունավետ	Նահանջող
Լեսոթո	Արդյունավետ	ՏԱ-ին միջված	Նահանջող
Մադագասկար	Նահանջող	ՄԶ-ին միջված	Նահանջող
Մալավի	Նահանջող	ՏԱ-ին միջված	Նահանջող
Մալի	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Մավրիտանիա	ՄԶ-ին միջված	ՏԱ-ին միջված	ՏԱ-ին միջված
Նիգեր	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Նիգերիա	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Ռուանդա	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Սենեգալ	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Սիերա Լեոնե	ՏԱ-ին միջված	Նահանջող	Նահանջող
Հարավաֆրիկյան Հնր.	Արդյունավետ	Նահանջող	Նահանջող
Սուդան	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Տանզանիա	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Չադ	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Չինոթալանդ	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան			
Արգենտինա	Նահանջող	Նահանջող	ՄԶ-ին միջված
Բարբադոս	Արդյունավետ	ՄԶ-ին միջված	ՄԶ-ին միջված
Բոլիվիա	Նահանջող	Նահանջող	ՄԶ-ին միջված
Բրազիլիա	ՏԱ-ին միջված	ՏԱ-ին միջված	Նահանջող
Չիլի	ՄԶ-ին միջված	ՄԶ-ին միջված	Արդյունավետ
Կոլումբիա	ՄԶ-ին միջված	Արդյունավետ	ՄԶ-ին միջված
Կոստա Ռիկա	ՄԶ-ին միջված	ՄԶ-ին միջված	ՄԶ-ին միջված

Հողվածներ

	1960-1970	1970-1980	1980-1992
Դոմինիկյան Հնր.	ՄՁ-ին միսված	ՏԱ-ին միսված	Նահանջող
Սալվադոր	ՄՁ-ին միսված	Նահանջող	ՄՁ-ին միսված
Գվաթեմալա	ՄՁ-ին միսված	ՏԱ-ին միսված	Նահանջող
Հայիթի	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Հոնդուրաս	Նահանջող	ՄՁ-ին միսված	ՄՁ-ին միսված
Ջամայկա	Արդյունավետ	Նահանջող	Նահանջող
Մեքսիկա	Արդյունավետ	Արդյունավետ	ՄՁ-ին միսված
Նիկարագուա	Արդյունավետ	Նահանջող	ՄՁ-ին միսված
Պանամա	Արդյունավետ	Արդյունավետ	ՄՁ-ին միսված
Պարագվայ	Նահանջող	ՏԱ-ին միսված	Նահանջող
Պերու	ՄՁ-ին միսված	Նահանջող	ՄՁ-ին միսված
Տոգո	ՏԱ-ին միսված	Նահանջող	Նահանջող
Տրինիդադ և Տոբագո	Նահանջող	ՏԱ-ին միսված	ՄՁ-ին միսված
Ուրուգվայ	Նահանջող	Նահանջող	ՄՁ-ին միսված
Վենեսուելա	ՄՁ-ին միսված	ՄՁ-ին միսված	Նահանջող
Հարավային Ասիա			
Հնդկաստան	Նահանջող	Նահանջող	ՏԱ-ին միսված
Նեպալ	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Պակիստան	ՏԱ-ին միսված	Նահանջող	ՏԱ-ին միսված
Շրի Լանկա	Նահանջող	Արդյունավետ	Արդյունավետ
Բանգլադեշ	Նահանջող	Նահանջող	Նահանջող
Արևելյան Ասիա			
Չինաստան	ՄՁ-ին միսված	Արդյունավետ	Արդյունավետ
Հոնգ Կոնգ	Արդյունավետ	Արդյունավետ	Արդյունավետ
Ինդոնեզիա	ՄՁ-ին միսված	Արդյունավետ	Արդյունավետ
Կորեա	Արդյունավետ	Արդյունավետ	Արդյունավետ
Մալազիա	Արդյունավետ	Արդյունավետ	Արդյունավետ
Մյանմար	ՄՁ-ին միսված	Նահանջող	Նահանջող
Ֆիլիպիններ	ՄՁ-ին միսված	ՏԱ-ին միսված	Նահանջող
Սինգապուր	Արդյունավետ	Արդյունավետ	Արդյունավետ
Թայլանդ	Արդյունավետ	Արդյունավետ	Արդյունավետ
Արաբական երկրներ			
Ալժիր	Նահանջող	ՄՁ-ին միսված	ՄՁ-ին միսված
Եգիպոս	ՏԱ-ին միսված	ՏԱ-ին միսված	Նահանջող
Մարոկկո	Նահանջող	ՏԱ-ին միսված	ՄՁ-ին միսված
Թուրքիա	Արդյունավետ	ՄՁ-ին միսված	ՄՁ-ին միսված

Մարդկային աղբահարության համաթիվը և դրա մոդիֆիկացումը Հայաստանում

Տարբերակի Հարությունյան

70-ական թվականներից սկսած, հասկառու զարգացած երկրներում, մեծ տարածում է ստացել «մարդկային աղբահարության» գաղափարը: Բանն այն է, որ մի օտար, և առաջին հերթին սոցիալիստական կողմնորոշվածություն ունեցող երկրների փորձը ցույց սվեց, որ անգամ ճնշման միջոցների սակավության դայմաններում ընթանալիքներն ունակ են հաղթահարել աղբահարությունը, եթե երկրում առկա է.

- առաջնահերթ առողջադասական ծառայությունների բարձր մակարդակ և դրանց հավասար մասշտաբային բնակչության բոլոր շերտերի համար,
- տարրական և միջնակարգ կրթության անվճար և երաշխավորված համակարգ հավասարադաս բոլոր երեխաների համար,
- խմելու ջրի մասշտաբային և սանիտար-հիգիենիկ նվազագույն դայմանների առկայություն բոլորի համար՝ անկախ ճնային ճնշման միջոցների նյութական կարողություններից:

Նշված ճնշմանական մոտեցումը, որն առաջին անգամ հանրությանը ներկայացվեց 1997 թվականի «Մարդկային զարգացման զեկույց»-ում¹, հիմնված էր լուրջ էմպիրիկ հաշվարկների վրա: Վերջինները հիմն ծառայեցին մարդկային աղբահարության համաթիվի մեթոդաբանության մշակման համար, ըստ որի մարդկային աղբահարության ասիճանն արտահայտվում է կենսական նշանակություն ունեցող երեք բաղադրիչներով՝

1. երկարակյան առողջ աղբելու անհնարիմություն (P1),
2. կրթելու և գիտելիք ձեռք բերելու սահմանափակություն (P2),
3. արժանադասիվ կենսամակարդակի բացակայություն (P3):

Առաջին բաղադրիչի հիմնական ցուցիչը վաղաժամ մահվան հավանականության գործակիցն է, սվյալ դեղմում այն բնակչության ճնակարար կոհորդ, որն, ըստ ժողովրդագրական համադասարան կանխաճնակման, չի աղբելու մինչև 40 տարեկան: Երկրորդ բաղադրիչն արտահայտվում է բնակչության թվում լրիվ անգրագեթ (կարդալ և գրել չիմացող) մարդկանց ճնակարար կոհով: Երրորդ բաղադրիչն արտացոլում է անհրաժեթ ճնակական ճնակումներով մարդու անաղահովվածության մակարդակը, որն իր հերթին ներկայացվում է երեք ցուցանիշներից բաղադրած գործակցով: Այդ երեք ցուցանիշները հեթևակյան են.

- P₃₁ - բնակչության այն մասը (տոկոսով՝ ընդհանուրի մեջ), որի համար խմելու ջուրն անհասանելի է,
- P₃₂ - բնակչության այն մասը, որի համար բժշկությունն անհասանելի է,
- P₃₃ - մինչև 5 տարեկան երեխաների այն մասը, որոնց բաժը թերսնության դասճառով հեթ է մնում նորմայից:

ՄԱԿ-ի անդամ երկրների համար մարդկային աղբահարության համաթիվի հաշվարկը կատարվում է ստրև բերված բանաճիկի միջոցով.

$$ՄԱՀ = [1/3 ((P1)^3 + (P2)^3 + (P3)^3)]^{1/3}$$

$$\text{որտեղ } P3 = 1/3 (P_{31} + P_{32} + P_{33})$$

ՄԱԿ-ի ջարգացման ծրագրի (հեթայուն՝ ՄԱԶԾ) մասնագեթները միջերկրային համադրումների միջոցով փաստում են, որ մարդկային աղբահարության վերը բերված համաթիվը հնարավորինս արտահայտում է առանճին երկրի ճնակական վասթար դայմաններից առաջացած անհասանելի և ընթանալիքների սոցիալական խոցելիությունը և վերջինիս հեթևանով մրանց աղբահարալու բարճը հավանականությունը:

Աղբահարության հիմնախնդրի ուսումնասիրության դինամիկ զարգացումները, մասնավորադեթ աղբահարության բազմագործոնային վերլուծությունները ճեգրեթիոն մոդելների կիրառմամբ, աղագուցում են, որ համաթիվի արդիականացման և ճեղայնացման հեթ կաղված հեթագոթական աճխասանիքները հարկավոր է օարումա-

¹Տե՛ս «Մարդկային զարգացման զեկույց», ՄԱԶԾ, Նյու Յորկ, ԱՄՆ, 1997:

կել, հաշվի առնելով հետևյալ կարևոր հանգամանքները.

- աշխարհում աղբահարության հիմնական օջախներ հանդիսացող Աֆրիկայի, Ասիայի (հասկաղես Չինաստանն ու Հնդկաստանը) և Լատինական Ամերիկայի երկրների շարքը համալրվեց նախկին սոցիալիստական հանրապետություններով, որտեղ «աղբահարություն» երևույթը դեռևս բազմակողմանի ուսումնասիրության կարիք ուներ՝ հասկանալու համար նշված համաթվերի կիրառելիության աստիճանը անցումային ճանապարհների դարազայում,
- աղբահարության ցուցանիշները ժողովրդավարական գործընթացների խորացման արդյունքում ֆաղափարական հասարակությունն առաջադրում է նոր սիդի, մեծամասամբ որակական ցուցանիշների (օրինակ, սոցիալական ծառայությունների որակի, սղառողների բավարարվածության մակարդակի և այլն) մշակման դադանը՝ մարդկային աղբահարության լիարժեք բնութագրման համար,
- վերջին տարիների համաշխարհային իրադարձությունները, նկատի ունենալով մարդածին (տարածային հակամարտությունները, աղաքեկչությունները, դաշտազմները և այլն) և բնածին (էկոլոգիական ցնցումները, երկրաշարժերը, ցունամիները և այլն) աղետների սասկացումը, դարձադրում է վերանայել մարդկային աղբահարության հայեցակարգը՝ աղբահարության գործոնների և աղբահարության վճանգների նոր բնութագրիչների ներառման առումով,
- գլոբալիզացիայի մարճնչող տարածումը հասկաղես զարգացող երկրներում առաջացնում է հակասություն այդ երկրների համար դեռևս օտար գաղափարների ներմուծման և ազգային ինֆնության դադանման միջև, որի հետևանքները նկատվում են երկրի ներսում դարերի ընթացում ձևավորված մարդկային և մշակութային արժեքների համակարգի խաթարման մեջ: Ժամանակակից հոգեբանների և հասարակագետների մի մասը բացասաբար է գնահատում երևույթը, անվանելով այն «մարդկային

աղբահարության» և «հասարակության բարոյալման» գործընթաց, ինչը նույնդես անհրաժեշտություն է առաջացնում մարդկային աղբահարության հայեցակարգը վերանայելու և մշակութաբարոյական ու ազգային արժանաղատության ցուցիչներով այն համալրելու:

Հարկ է նշել նաև, որ մարդկային աղբահարության համաթվի արդիականացման անհրաժեշտության հետ մեկտեղ, Հայաստանում առկա են նաև բավարար դայմաններ, որոնք աղադովում են այդ խնդրի լուծման մեթոդաբանական և տեխնիկական հիմքերը: Նախ, 1996 թվականից ի վեր Հայաստանում դարբերաբար իրականացվող ճնային ճնեսությունների կենսամակարդակի ընտանային հետազոտությունների շնորհիվ բավականին հարուստ սվյալների բազա է հավաքագրվել և վիճակագրական դիմամիկ շարքեր են ստեղծվել աղբահարության և դրա հետ անմիջականորեն առնչվող երևույթների վերաբերյալ:

Երկրորդ, Համաշխարհային բանկի փորձառու մասնագետների աջակցությամբ էաղես բարելավվել և միջազգային փորձով համալրվել է աղբահարության ուսումնասիրությունների մեթոդաբանական շրջանակը, որն էլ ավելի է մոտեցվել հայաստանյան սոցիալ-ճնեսական իրականությանը:

Երրորդ, տարիների ընթացում կուտակված հնտությունների արդյունքում որոշակիորեն կատարելագործվել են վիճակագրական սվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեթոդները, ինչն իր դրական ազդեցությունն է թողել աղբահարության վիճակագրության որակի և հուսալիության վրա:

Չորրորդ, սկսած 2000 թվականից, ՄԱԿ-ի Ձարգացման ծրագրի օժանդակությամբ, մեր երկրում բազմաբնույթ հետազոտություններ են իրականացվել և վերլուծական զեկույցներ դասրասվել մարդկային աղբահարության երևույթի ուսումնասիրության, դրա հայաստանյան առանձնահատկությունների բացահայտման և միջմարդային համադրումների կատարման ուղղությամբ: Մարդկային աղբահարության վերաբերյալ հարուստ տեղեկատվությանը զուգահեռ, ՄԱԶՓ փորձագետների աջակցությամբ մշակվել է սո-

ցիալական մոնիտորինգի մեթոդաբանությունը, որը հիմն է ծառայել աղբահանության սոցիալական ցուցիչների վերաբերյալ հարուստ սվյալների բազաների ստեղծման և դրա օգտագործմամբ մի Եարբ համաթվերի (սոցիալական խոցելիության, զրկվածության, մարդկային աղբահանության) հայվարկման համար:

Վերոբերյալ անհրաժեյ և բավարար գործոնների առկայությունը վկայում է մարդկային աղբահանության համաթվի մոդիֆիկացման, այն է՝ արդիականացման և յեղայնացման նոյասակահարմարության մասին:

Մարդկային աղբահանության համաթվի մոդիֆիկացիան

Ստորև ներկայացվածը մեր կողմից առաջարկվող մյակուններն են մարդկային աղբահանության համաթվի (հեյայտու՝ ՄԱՀ) մոդիֆիկացման հիմնահարցի յուրջ:

Ուսումնասիրելով աղբահանության, ներառյալ՝ մարդկային, հիմնախնդրին նվիրված՝ երկում առկա մասնագիտական գրականությունն ու հենվելով ՄԱՀՕ աջակցությամբ թողարկվող «Հայասանի սոցիալական միտումները» յեղեկայվական-վերլուծական ոյարբերականում զեյեղված մեթոդաբանական մոտեցումների և դեզագրեգացված սվյալների վրա, զալիս եմբ այն եգրահանգման, որ Հայասանի Հանրադեյության մարդկային աղբահանության հայեցակարգը յահեկանորեն կլրամյակվի, եթե ընդգրկի հայ հասարակությանն առավելագույնս մտահոգող հեյլյալ երևույթների ցուցիչները.

1. իրական գործագրկության բարձր մակարդակը,
2. սեփական կացարանի բացակայությունը ,
3. առաջնային բուժօգնության անմասշեղիությունը,
4. կացարանային ջրամատակարարումից զրկվածությունը,
5. միջնակարգ-մասնագիտական կրթության անմասշեղիությունը:

Նյված երևույթների հրատարությունն աղացուցվում է նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (հեյայտու՝ ՀՀ ԱՎԾ) կողմից

2004-ի աղիլի 1-ից մինչև 2005-ի մարտի 31-ը երկրի ամբողջ տարածումն իրականացված 6816 յնային յնտեսությունների կենսամակարդակի հեյագոտության սվյալներով: Այսոյես, համաձայն վերջինի, Հայասանում իրականում գործագուրկ է յնտեսաոյես ակտիվ բնակչության 20.7 տկոսը, ինչը մոտ 3 անգամ ավել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերոյության (ՏՀԶԿ) և մոտ 2.4 անգամ եվրամիության երկրների մակարդակից: Սոցիալիտական յնտեսակարգի ոյայնաններում համատարած զբաղվածությանը «սովոր» մեր բնակչության համար մյական այխատանի բացակայությունը ոչ միայն յնտեսական բացատական գործոն է, այլև սոցիալական աղեյ, որը յատերի համար վերաճում է հուսալիության և աղագայի նկատմամբ անվստահության: Պատահական չէ, որ գործագուրկների մոտ 45 տկոսն այսոյես կոչված «հուսալված գործագուրկներն» են, այսինմն՝ նրանբ, ովբեր այխատանբ են փնտում 24 ամսից ավել: Գործագրկության բարձր մակարդակը կարևորվում է ոչ միայն որոյես եկամտային, այլ նաև մարդկային աղբահանության բնութագրիչ, ինչն արդարացում է դրա ընդգրկումը մարդկային աղբահանության մոդիֆիկացված համաթվում:

Սեփական կացարանի բացակայությունը յուկայական յնտեսությամբ նույնիսկ զարգացած երկրներում անհրաժեյ գործոն չէ աղբատ կամ չբավոր համարվելու համար, ինչի մասին են վկայում նաև էմոլիոկ հայվարկների արոյումնում ստացված կոռեկցիայի ցածր գործակիցները: Մինչդեռ Հայասանում իրողությունը ետոյես այլ է: Բանն այն է, որ խորհրդային տարիներից ժառանգած և հանրային սեփականություն հանդիտացող բնակարանային ֆոնդի էզալիտար սեփականայնորհման գործընթացից օբյեկտիվորեն դուրս մնաց հայասանաբնակ ընտանիբների մոտ 10 տկոսը: Դրանբ էին 1988 թվականի ավերիչ երկրայարժի ոյատճառով իրենց կացարանները կորցրած ու Պարաբոյան հականարտության հեյևանով փախսականի կարգավիճակով Ադրբեյջանից Հայասան ներգաղթած ընտանիբները: Քանի որ մարդկային աղբահանության համաթվում ներառված ցուցանիյները բնորոյում են հանրային ծառայություններից օգսվելու անհավատար ոյայնաններն ու

դրանց անմասշեխությունը մարդկանց որոշակի խմբերի համար, աղա, կարծում ենք, արդարացված է նաև այս՝ «սեփական կացարանի բացակայությունը» ցուցանիչի ընդգրկումը Հայաստանի առանձնահատկություններին համադաստիսանեցված մոդիֆիկացված մարդկային աղբյուրի համաթվում: Ավելին, դեռևս 1999-ին կատարված աղբյուրի համեմատական վերլուծությունն աղետի գոտու բնակիչների, փախսականների և այլ բնակավայրերում բնակվող հայաստանցիների խմբերում միանշանակորեն աղացուցեց սեփական կացարանի բացակայության գործոնի ուղղակի ազդեցությունն աղբյուրի, հասկալիս՝ մարդկային, մակարդակի վրա:

Եթե առաջարկվող երկու ցուցանիչների ընդգրկումով աղա հոլովում է մարդկային աղբյուրի մոդիֆիկացված համաթվի որոշակի «ընդլայնում», աղա հաջորդ երկու ցուցանիչներն ավելի «ներացնում» են արժանադասիվ կենսաձևի ամփոփ բաղադրիչը՝ սեղայնացնելով այն հայաստանյան իրականության շրջանակներում: Այսպես, օրինակ, խմբելու ջրի հասանելիության ցուցանիչն առաջարկվում է փոխարինել ավելի նեղ, սակայն երկրի մարդկային աղբյուրի սեսակեցից առավել բնութագրական՝ «իրենց կացարաններում խմելու ջրի ծորակ չունեցող սնային սնեսությունների սեսակարար կոհը» ցուցանիչով: Բժեկության անհասանելիության բաղադրիչն ավելի կոնկրետացվել է և սացել հեսկյալ բովանդակությունը՝ «ընթացիկ հիվանդություններով հիվանդացած, բայց անմասշեխության դասձառով բուժօգնության չդիմած բնակչության սեսակարար կոհը բոլոր հիվանդացածների մեջ»:

Ներկայացված ցանկի հինգերորդ՝ «միջնակարգ-մասնագիտական կրթության անմասշեխության» ցուցանիչն առաջարկվում է որդես փոխարինող մարդկային աղբյուրի ավանդական համաթվում օգսագործվող «մինչև 5 տարեկան երեխաների այն մասը, որոնց ֆառը թերսնության դասձառով հես է մնում նորմայից» ցուցանիչի: Այս առաջարկն ունի երկակի հիմնավորում: Նախ, երկրի վիճակագրությունը, առավել ևս սնային սնեսությունների հեսագոսությունները, չեն ներառում երեխաների թերսնուցման ցուցանիչի դարբերական հառվարկը,

իսկ եղած դիտվածային սեղեկասվությունն էլ հառախ ոչ վասահելի աղբյուրներից է: Միաժամանակ, ինչդես վասահեցնում են հանադեսության առողջադասական ծառայությունները, երկույթը ռաս ֆիչ տարածում ունի երկում, գուցե առանձին դեղերի սեսուվ, որը դժվար է «վիճակագրություն» համարել:

Մյուս կողմից, միջնակարգ-մասնագիտական (ներառյալ ավագ դորոցը) կրթության անմասշեխությունը, ինչդես վկայում են բազմաթիվ հեսագոսությունների արդյունքները, թե՛ աղբյուրի և թե՛ մարդկային աղբյուրի դասձառներից մեկն է հասկալիս երիտասարդության ռջանում, ինչը վսանգում է երկրի ժողովրդագրական զարգացումները՝ խոչընդոսելով երիտասարդ ընսանիքների սեսոծմանը, իջեցնելով ծնելիության մակարդակը, նդաստելով երիտասարդ առեսառուժի արսագադրիս և այլն: Ուսի և «15-17 տարեկան երիտասարդների թվում նյութական միջոցների բացակայության դասձառով կրթության դասոնական համակարգում չընդգրկվածների սեսակարար կոհը» ներառվել է մարդկային աղբյուրի մոդիֆիկացված համաթվի արժանադասիվ կենսաձևը բնութագրող բաղադրիչում:

Այսդիսով, Հայաստանի սոցիալ-սնեսական իրավիճակի յուրահատկությունների վրա հիմնված մարդկային աղբյուրի մոդիֆիկացված համաթիվը կունենա հեսկյալ սեսը.

$$ՄՄԱՀ \text{ Հայաստան} = [1/4((P1)^4 + (P2)^4 + (P3)^4 + (P4)^4)]^{1/4}$$

որսել՝

P1 - իրական գործագրության մակարդակն է՝ արսահայսված սնեսադես ակիիվ բնակչության մեջ գործագուրկների սեսակարար կոհով,

P2 - բնակչության անգրագիտության մակարդակն է՝ հառվարկված որդես 10 և բարձր տարեկան բնակչության կազմում կիսագրագեսների (գիի կարդալ, բայց չգիի գրել) և անգրագեսների (չգիի ոչ կարդալ, ոչ գրել) սեսակարար կոհը,

P3 - արժանադասիվ կենսաձևի ամփոփ ցուցանիչն է, որը կազմված է երեք բաղադրիչներից և հառվարկվում է $P3 = 1/3(h+e+w)$ բանաձևով, որսել՝

(h) - ընթացիկ հիվանդություններով հիվան-

դացած, բայց անմասշտաբային տարածաշրջանում բուժօգնության չդիմած բնակչության սեսակարար կոչը բոլոր հիվանդների մեջ,

(e) - 15-17 տարեկան երիտասարդների թվում նյութական միջոցների բացակայության տարածումը կրթության դաստիարակման համակարգում չընդգրկվածների սեսակարար կոչը,

(w) - իրենց կացարաններում խմելու ջրի ծորակ չունեցող սնային սնեսությունների սեսակարար կոչը:

P4 - սեփական կացարան չունեցող բնակչության սեսակարար կոչը:

Մարդկային աղբասության մոդիֆիկացված համաթվի կիրառման ոլորտը, ինչպես արդեն նշվեց, երկրի ներսում ցանկացած կրթվածով համադրումների կասարումն է: Առաջին անգամ ման համադրումների անհրաժեշտությունը ծագեց «Աղբասությունը Հայաստանի բնակչության խոցելի խմբերում» ուսումնասիրության ընթացքում, երբ փախսականների, աղետի գոտի բնակիչների և այլ սեղաբնակների միջև եկամտային և մարդկային աղբասության ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծություն կասարվեց: ՄԱԶԾ ազգային փորձագետների խումբը (Ա. Միրզախանյան, Ն. Ջրբաջյան, Ն. Շահնազարյան և Ռ. Եգանյան), հիմնվելով 2000 սնային սնեսությունների հեսագոտության արդյունքների վրա, առաջարկեց լրամշակել մարդկային աղբասության համաթվը՝ իրական գործադրության մակարդակի ցուցանիշի ընդգրկմամբ²:

Այնուհետև, 2003 թվականին, ՄԱԶԾ աշակցությանը, Հայաստանի բոլոր մարզերից ընտրված 6000 սնային սնեսություններում իրականացված Մարդկային զարգացման ազգային հեսագոտության արդյունքները հիմն ծառայեցին մեկ այլ սեսանկյունից մարդկային աղբասության համաթվի մոդիֆիկացման համար, այս անգամ արդեն մարդային համադրումներ կասարելու նդասակից ելնելով³:

Ներկայացվածը ևս մեկ մոտեցում է մարդկային համաթվի մոդիֆիկացման ուղղությամբ, որը չի հավակնում ամբողջական լինելուն: Սակայն,

համակցելով վերը նշված երկու մոտեցումները, մենք փորձել ենք համաթվում ընդգրկված ցուցանիշները կոռելու միջոցով դասակարգել դրանք ըս կարևորության: Այսպես, օրինակ, սեփական կացարանով չադադրվածության ցուցանիշը, ունենալով բարձր կոռելագրվածություն աղբասության հես, համաթվում ներառվել է որդես մեկ լիարժեք բաղադրիչ, այլ ոչ թե արժանադասիվ կենսաձևի ամփոփ բաղադրիչի երեք ցուցանիշներից մեկը՝ 1/3 կոռով: Գործադրության իրական մակարդակի բաղադրիչը նույնդես բարձր կոռ է սսացել, որի արդյունում համաթվի ընդհանուր բաղադրիչները չորսն են՝ ավանդական երեքի փոխարեն: Համադասասխանաբար, խորանարդի փոխարեն առաջարկվող մոդելում օգսագործվել է 4-րդ ասիճանը:

Մարդկային աղբասության մոդիֆիկացված համաթվի մարդային համադրումների արդյունում կարելի է մշակել մարդային գործակիցներ, որոնք հեսագայում կարող են կիրառվել, օրինակ, ըս առանձին մարզերի սդառողական զամբյուղի հասվարկման, ընսանեկան նդասի բազային գումարի սսհմանման կամ սոցիալական ծառայություններ մասուցող բյուջեսային ածխասողների (մանկավարժների, ընսանեկան բժիշկների և այլն) ածխասավարձային դրույմների որոման համար:

Գրականություն

1. «Հայաստանի սոցիալական դասկերը և աղբասությունը», 77 ԱԿԾ: Երևան 1998-2006:
2. «Աղբասության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Երևան, 2003:
3. «Մարդկային զարգացման ազգային զեկույց», UNDP, Երևան, 2000-2002:
4. «Հայաստանի սոցիալական միսումները» սեղեկատվական-վերլուծական դարբերական, Երևան, 2001-2005:
5. «Աղբասմես ֆաղափականությունը Հայաստանում», UNDP, Երևան, 2002:
6. «Աղբասությունը Հայաստանի բնակչության խոցելի խմբերում», UNDP, UNHCR, UN Coordinator Fund, Երևան, 1999:

Տարևիկ Հարությունյանը ԵՊՀ Տնեսագիտության ֆակուլտետի տնեսության մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասդիրան է:

² Տես «Աղբասությունը Հայաստանի բնակչության խոցելի խմբերում», ՄԱԶԾ, 1999, www.undp.am
³ Տես Ն. Ջրբաջյան «Մարդկային աղբասություն ու Հազարամյակի զարգացման նդասակները 77 մարզերում», «Հայաստանի սոցիալական միսումները» սեղեկատվական-վերլուծական դարբերականի 5-րդ թողարկում, ՄԱԶԾ/77 կառավարություն, հունիս 2004, www.undp.am

Միկրոադախության ազդեցությունն աղբահարության կրճատման վրա գյուղական շրջաններում

Փայլանե Մովսիսյան

Ավելի քան 10 տարի է, ինչ Հայաստանում լայն թափով զարգանում է միկրովարկավորման գործընթացը: Վարկային կազմակերպությունների մասին գործում է ՀՀ օրենք: ՀՀ կենտրոնական բանկը մշակել է հասուկ ռազմավարություն կարգավորելու և վերահսկելու միկրոֆինանսական շուկայի օրինական դաշտում: Չարգացող միկրոֆինանսական շուկայի կարևոր դեր ունի գյուղական շրջաններում սնտեսական աճի և աղբահարության նվազեցման առումներով: Ներկայումս միկրոֆինանսական շուկայի վարկավորող հաստատությունները ներմուծում են բազմադասի ֆինանսական գործիքներ աղբահարության դաշտում: Չնայած առաջարկված ծառայություններին՝ ցածր եկամտով սնային սնտեսությունների ռիսկերի նվազեցման մեխանիզմները դեռևս լիարժեք ձևավորված ու զարգացած չեն: Միկրոադախության օգտավետ և արդյունավետ գործիք է աղբահարության ռիսկերի ճիշտ կառավարման գործում:

Միկրոադախության դերը և նշանակությունը

Սոցիալադախության անադախով սնային սնտեսություններն ավելի խոցելի և թույլ են շուկայում: Չնայած բազմաչափ աղբահարության դաշտում, ռիսկերի դաշտանվածության բացակայությունը ստանում է իրենց կյանքին և գույքին: Յուրաքանչյուր օր նրանք կարող են դժվար կացության առջև կանգնել և մի ակնթարթում ի դերև հանել դժվարությանը ձեռք բերված աղբահարությանը և խնայողությունները:

Միկրոադախությունը ֆինանսական ռիսկերի կառավարման գործիք է ցածր եկամտ ունեցող սնային սնտեսությունների համար: Այն մի համակարգ է, որը սովորաբար դաշտանում է սոցիալադախության անադախով մարդկանց այն-

դիսի ծայրահեղ իրավիճակներից, ինչպիսիք են մահը, գույքի կորուստը, ծանր հիվանդությունը կամ բնական աղետները: Սոցիալադախության անադախով մարդկանցից շատերը ռիսկերը հաղթահարում են իրենց սեփական միջոցներով և ոչ ինստիտուցիոնալ մեխանիզմներով: Ծայրահեղ իրավիճակներում, նրանք դրամական փոխառություններ են վերցնում իրենց ընկերներից, հարկադրված վարկեր են փորձում ստանալ բանկերից, վարկային միավորումներից կամ միկրոֆինանսական կազմակերպություններից: Երբեմն նրանք վաճառում են իրենց գույքը, վերջ դնում բիզնեսին, չեն վերադարձնում վարկերը, դաշտանում են ծախսերը և ստանում, դաշտահարում է, որ նույնիսկ երեխաներին զրկում են դպրոց հաճախելուց՝ ուղարկելով նրանց աղբահարությանը:

Միկրոադախությունը կանոնավոր համակարգ է, որը խթան է հանդիսանում սոցիալադախության անադախով խավի ռիսկերի կառավարման համար, քանի որ փոխառությունը և վարկը դեռևս բավարար չեն՝ ձեռք բերված վաճառքի դաշտանելու համար: Միկրոադախությանը մի մեխանիզմ է, որը վերաբաշխում է ռիսկի գործում, օգնում է ցածր եկամտ ունեցող սնային սնտեսություններին հաղթահարել անադախության դժվարությունները և մեծ կորուստները՝ փոխարինելով դրանք կանոնավոր և փիշ վճարումներով (ադախության վճարումներով), որոնք ընդունելի են նրանց սարեկան բյուջեի սահմաններում: Միկրոադախության դաշտանի աճը բացատրվում է նրանով, որ բարձր ռիսկայնությունը, անադախության դժվարությունները և ճգնաժամները վերացնող համակարգերի փնտրումը գնալով ավելանում է: Բացի դրանից, միկրոադախության զարգացումը մեծադախությանը և սնտեսության զարգացման վրա: Ռիսկերի արդյունավետ կառավարումը հնարավորություն կտա մարդկանց ավելի շատ փոխառություններ և վարկեր վերցնել ներդրումներ կատարելու համար: Դրանով իսկ հնարավորություն կընձեռնվի ավելացնել աղբահարությանը, բարձրացնել եկամտների մակարդակը և բարելավել սոցիալական դաշտանները գյուղական համայնքներում:

**Միկրոադախակազրության
դահանգները և խնդիրները**

Ինչդեռ շատ զարգացող երկրներում, այնպես էլ Հայաստանում հասունացել է այնպիսի համակարգի զարգացման դահանգը, որը կկրճատի աղբահարությունը, կխթանի փոքր և միջին բիզնեսի զարգացմանը՝ ռիսկերի արդյունավետ կառավարման միջոցով: Միկրոադախակազրությունն աշխարհում նորաստեղծ ֆինանսական ծառայություն է, որը հաջողությամբ ներդրվել և լավ արդյունքի է հասել Ուգանդայում, Բանգլադեշում, Ֆիլիպիններում և Հնդկաստանում: Ցանկացած ադախակազրության կազմակերպություն, որը միկրոադախակազրության ծառայություն է մատուցում սոցիալապես անադախակ համայնքներում, դեմք է կատարի շուկայի ամբողջական և մանրագին վերլուծություն: Անհրաժեշտ է գնահատել առաջարկը և դահանգարկը, հասկանալ կառավարության ռազմավարությունը և կանոնակարգերը, ուսումնասիրել հնարավոր ռիսկերը, որոնց կարող են բախվել ցածր եկամուտ ունեցող սնային ընկերությունները, գնահատել ադախակազրության յուրաքանչյուր սեսսի բարդությունները և յուրահասկությունները:

Ադախակազրությունը դեմք է ունենան միկրոադախակազրության հիմնական սկզբունքների դարձ և ճշգրիտ նկարագրությունը: Գրականությունում սովորաբար առանձնացվում են հետևյալները՝

- մեծ թվով մարդիկ բախվում են միևնույն ռիսկին, սակայն ոչ բոլորն են կրում սլայդ ռիսկը նույն դահանգին,
- ռիսկերով դայանավորված կորուստները դեմք է լինեն որոշակի և չափելի,
- կորուստի հավանականությունը դեմք է լինի հազվելի,
- ադախակազրական շահույթի առկայություն,
- ադախակազրական վճարները դեմք է լինեն ընտեսապես թույլատրելի և ընդունելի:

